ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024թ. ապրիլի 9 N 99-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի 4.1.1 կետը և ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայսատանի Հանրապետության կառավարության 2015թ.-ի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայսատանի Հանրապետության կառավարության 2003թ.-ի հունվարի 30-ի N 134- Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետի և 18-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2024թ.-ի ապրիլի 18-ին Հայասատանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արագածոտնի մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈՒ) «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումն ու իրականացումը» թեմայով:

2. ՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՇՈՒ-ի ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ, մարզի տարհանման հանձնաժողովի նախագահ Հարություն Գուլյանին,

2) ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Մենուա Ասատրյանին:

3. Հաստատել ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելվածի.

4. ՇՈՒ-ին ընդգրկել մարզի տարհանման հանձնաժողովին, ՀՀ Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը, Աշտարակ, Թալին քաղաքներին, Ն.Եդեսիա, Ն.Ամանոս, Արագածոտն, Արուճ, Կոշ, Ուջան, Ոսկեվազ, Օշական բնակավայրերը, «Աշտարակի և Թալինի բժշկական կենտրոններին», ոստիկանության մարզային վարչությանը, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Արագածոտն մասնաճյուղ ՊՈԱԿ-ին, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ին, Մուսալեռ ՓԲԸ մասնաճյուղի Աշտարակի տեղամասին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ-ին, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանմանը:

5. ՇՈՒ-ի ղեկավարման շտաբի պետին.

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2024թ. ապրիլի 9-ը ներկայացնել իմ հաստատմանը,

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) ապահովել փոխհամագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև,

4) ճշգրտել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության» պլանը,

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2024թ. ապրիլի 15-ին:

6. ՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

2) մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային տարհանման» պլաններով նախատեսված միջոցառումները,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 4/9/2024 14:38:21 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2024թ. 04.09 թիվ 99-Ա որոշման

ԿԱԶՄ

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Մ. Ասատրյան:

2. Խաղարկման խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա. Շամիրյան:

3. Խաղարկման խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետ, փ/ծ մայոր Ա. Մելիք–Ստեփանյան

4. Վերլուծության նախապատրաստման խմբի ղեկավար՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ, փ/ծ փոխգնդապետ Հ. Մուրադյան:

5. Վերլուծության նախապատրաստման խմբի անդամ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գ. Ավագյան:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ